

Գործի ID՝

Վարչաշրջանի հանրային աջակցության արձանագրությունները ցույց են տալիս, որ դուք գերվճարված նպաստներ ունեք, և իրավագանց եք, ինչը կամ Cash Aid գերվճարման և/կամ CalFresh (Նախկինում հայտնի որպես «Սննդամթերքի կտրոններ» ծրագիր) գերթողարկման արդյունք է: Հետևյալ ժամկետանց գումարը(ները) կուղարկվեն արտոնագրային հարկերի խորհուրդ հարկի հատուցման միջամտության համար: Սույն ծանուցագիրը կարող է չկապվել այն բոլոր գումարներն, որոնք դուք պարտք եք:

Cash Aid \$**CalFresh \$**

Զանի որ այս գումարը չի մարվել, արտոնագրային հարկերի խորհուրդը կիրականացնի գումարի ամբողջական կամ մասամբ պահում ձեր կողմից ակնկալվող հայտարարագրված Նահանգային եկամտահարկից կամ վիճակահարկի շահումներից (ինչպես լիազորված է Նահանգային վերահսկիչի կողմից Կալիֆորնիայի կառավարության օրենսգրքի 12419.5 բաժնում, և Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների վարչության քաղաքականության և ընթացակարգերի մասին ձեռնարկում բաժին 20-400)՝ օգնելու մարել այս ժամկետանց գումարը: Այս գործողությունը կկիրառվի նույնիսկ այն դեպքում, եթե դուք հարկի վերադարձի հայտարարագիր եք ներկայացնում ամուսնու/կնոջ հետ համատեղ, ով չունի ժամկետանց նպաստներ:

Սույն գործողության վարչական վերանայման ձեր իրավունքը

Եթե Դուք կամ ձեր ամուսինը/կինը (հարկի համատեղ վերադարձի դեպքում) համաձայն չեք ձեռնարկվող գործողություններից որևէ մեկի հետ, ապա դուք կարող եք վերանայում պահանջել վարչաշրջանի ներկայացուցչի ներկայությամբ: Դուք պետք է վերանայում պահանջեք՝ դիմելով վերոնշյալ վարչաշրջանին: Վերանայման ժամանակ ձեզ կարող է ներկայացնել փաստաբանը, և դուք իրավունք ունեք բերել ապացույցներ և ուսումնասիրել վարչաշրջանի կողմից օգտագործված փաստաթղթերը, հաշվարկելու ժամկետանց գումարը: Գործողության վերաբերյալ ծանուցման բնօրինակը ստանալու համար, որը նշում է գերավճարի պատճառները և հաշվարկը, դիմեք վարչաշրջանին (վերոնշյալ):

Որոշ հնարավոր պատճառներ, թե ինչու դուք կարող եք չհամաձայնել, հետևյալն են՝ (1) դուք երբևէ չեք ստացել Cash Aid կամ CalFresh, (2) որպես ժամկետանց ներկայացված գումարը ճիշտ չէ, կամ (3) սնանկության մասին հայտ ներկայացնելու ժամանակ սնանկության մասին գործող օրենքները չեղարկել են որպես ժամկետանց նշված գումարը, և (4) վարչաշրջանը չի գործել Նահանգային օրենքներին և Cash Aid-ի կամ CalFresh-ի կանոնակարգերին համապատասխան՝ ձեր պարտքն հաշվելու ժամանակ:

Որպեսզի վարչաշրջանին ժամանակ տաք կատարելու անհրաժեշտ շտկումներ իր արձանագրություններում՝ Նախքան հնարավոր նվազեցման կատարումը ձեր Նահանգային եկամտահարկի վերադարձվող գումարից կամ Կալիֆորնիա Նահանգի կողմից ձեզ պարտք այլ գումարներից, վերոնշյալ վարչաշրջանը ձեր դիմումը պետք է ստանա այս ծանուցման օրվանից 30 օրվա ընթացքում: Այնուամենայնիվ, տարվա ընթացքում ցանկացած պահի կարող եք պահանջել վերանայել ձեր գործը, ինչպես թույլատրված է Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների վարչության քաղաքականության և ընթացակարգերի մասին ձեռնարկով՝ բաժին 20-400:

Դուք, կամ ձեր ամուսինը/կինը, կարող եք դիմել վերադաս դատարան՝ դադարեցնելու այս գործողությունը և որոշելու, թե արդյոք ժամկետանց նշված գումարը(ները) ճիշտ է(են): Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք դիմել սույն ծանուցման մեջ վերոնշյալ վարչաշրջանին: